

օրինաւոր յառաջացողիչ թեւարկութիւններ, . . .
 Յազանք մենք մեզի կը պահէք այս խորհրդա-
 ծուծիւնները, յաւատով որ ապագան — ո՛հ այս
 խաբեպատիր բառը — իրագործէ մեր յոյսերն
 ու բազմապէսները, 882, 204, 23011



ՆԵՐՍԷՍԵԱՆ ՈՐԲԱՆՈՒՅՆ Ի ԶՄԻՐՈՒՆԻՍ

Օ միւսնիայի Հայն վերջի դէպքերու առ-
 թիւ ազգին մեծամեծ կարատութեանց մէջ ի
 միխթարութիւն անոր՝ իւր լուսնայն նուիրելով,
 ցուցուց որ բնական գաւառին պէս պաղաւթեր,
 բուխ սիրտ մ'ունի: Արդարեւ ժամանակը եղան
 որ ամիսն մէկ երկու անգամ այլեւայլ բարե-
 բարական վախճաններու համար դրամածողներն
 եղան, Զմիւռնիայի իւր աղնիւ սրտովն եւ ա-
 ռատատուր ձեռօքն ամենուն մասնակեցեալ:

Բայց այս ամէն ձեռնարկութեանց մէջն
 Կերսեսեան Որբանոցը՝ Զմիւռնիայի Հայուն բա-
 րերարութեանց կոթողն ըլլալու պատիւն ունե-
 ցաւ: Այս Հիմնարկութիւնը 1897 Մարտ 30ին՝
 քաղքիս երիտասարդաց խմբի մը կողմանէ հի-
 մնուեցաւ: Ընկերութեան անգամը Հիմայ կը
 Հասնին 28ի, բայց ըստ կանոնադրութեան
 մինչեւ 50 (!) կրնայ բարձրանալ: Անգամը
 բուռնով կ'ընտրուին, որոնք ընդհանուր ժողովն
 կը կազմեն, այդ ընդհանուր ժողովը կ'ընտրէ
 Գործադիր ժողովոյ անդամները, թւով 9 հոգի,
 եւ այս ինչ հոգւոյ ձեռքն է ամբողջ որբանոցի
 վարչութեան գործը: Այդ երկու ժողովներն
 ալ ունին իրենց Ատենապետն եւ Ատենապետի
 Գործադիր ժողովն՝ յօգնութիւն իւր գործոյն,
 ընտրած է 10 ինստիտուտի տիկնայք, որոնց մայ-
 րենի ինստիտուտ յանձնուած է որբանոցի մարտու-
 թեան, Հանգրիմներէն իւր կերակրելուց հոգը:

Որբանոցի ընկերութեան կեանքն ամեն
 տուն եւ անտէր մնացեալ որբեր ժողովել, անոնց
 ազգային կրթութիւն մը տալ եւ իրենց ապա-
 գային համար ապրուստի միջոց մը հայթայթել եւ
 յաւարտ իւր գործունէութեան շրջանին՝ զանոնք
 իրենց հայրենիքը դարձնել:

1 Մինչեւ աղջկ մէկերն ընկերութիւն կազմեցին
 եւ իրենց զուարթութեան յապաղեալ գրամն շարժա-
 կաններ ժողովելով՝ գումար բարերարական վարձաններու
 նուիրեցին: Գարձեալ մասնաւոր սեռատարութեան արձանի
 է երիտասարդաց ընկերութիւն մը, որոնք իրենց վատակոց
 երախայրեղանքն որը մը կը հոգան, եւ իրենց առաջին նուէրն
 մեր իսկ ներկայիս ինքեան նուիրեցին: Ըր քաղաքներն եւ
 մեր յորգործները գրեթէ քրիստոնէական սիրոյ այս բարերա-
 րայն գործին, մէկ յաջատու է:

Այդ աղնիւ երիտասարդք իրենց ձեռնար-
 կութեան քաջաբերիչ շարժառիթ լոկ եւ միայն
 հայուն բուխ սիրտն աւառատատուր ձեռքն ու-
 նեցած են. եւ ասն այսօր այդ բարերարական
 յարկին տակ 36 որբ աղջկ ու պատմապարհի,
 Որբանոցի եկամուտը կը կազմեն տարեկան եւ
 ամսական բաժանորդագրներ, նուէրք, ի նպաստ
 որբանոցի տրուած հանդէսներու մուտքն եւ
 վիճակահանութիւնք: Ահա այդ աղբիւրներովն
 որ որբերն հոս խիստ լաւ հոգացողութիւն մը
 կը վայելն: Կերակուրն, հագուստն, ինչպէս նաեւ
 ննջարանք, խիստ լաւ վիճակի մէջ են: Եղջ երե-
 սէն արդէն կը տեսնուի իրենց ինստիտուտ զա-
 րոններն եւ ինստիտուտի հիմնանցմէ ճշմարիտ
 հայրական եւ մայրական խնամքն ու սէր վայ-
 երել:

Որբանոցն ընդարձակ եւ օգտակար պար-
 տէզով շէնք մըն է:

Հոս ի սէր ճշմարտութեան ըսել պարտա-
 կան ենք որ մեր կատարած մէկ այցելութենէն
 խիստ գոհ մնացինք: Պատուաբաժան ինստիտու-
 րութիւնն իւր որբերն մեզի ներկայացուց, որոնցմէ
 մին խիստ զգայուն կերպով սրտաճմլիկ բանաս-
 տեղութիւնն մը արտասանեց: Մեր խորին
 գոհունակութիւնն եւ շնորհակալութիւնն այդ
 աղնիւ եւ եռանդուն երիտասարդներու յայտնելէ
 վերջ, կը խորհնք ազգայիններէ որ այդ ճշմա-
 րիտ քրիստոնէական բարերարութեան գործն
 ինչպէս մինչեւ հիմայ, նոյնպէս ապէ վերջ իրենց
 լուսնային միջոցով քաջաբերելն եւ չկենան: Ան-
 սկիպքն, եւ կ'ապահովեցնէ առաջին շարունա-
 կութիւն մը, բայց առաջին առաջին պէտքն է ըլլալ
 կատարածը, որ կ'ախուս ունի անընդհատ քա-
 ջալեութեան:

Զմիւռնիա, 26. Յուլիոս 1898:

Հ. Ա. Ս.



ՄՅՈՒՆԻՍԵՐԻՍ

ՆՈՐ ՀՐԵՍՏՈՐԻԱՆՈՒԹՅՈՒՆ

108. ՄԾՆԿԻՆԻՆԻՉ Հ. — Յմ երթաւ. Quo vadis? Վէպ
 Ներոնի ժամանակից: Լեհերէնից թարգ. Սոս. Լի-
 սիցեանց, թիֆ. Մ. Դ. Ռոսինսկի 1898: Միտ
 80 հ. 736 էջ: Գին՝ ըր. 1.50: (Թ. Հ. Վրտը. Ընկ.
 №. 144:)
107. ՄԿՐՏԻՉ ԼՄԻՆԻ երկաթուղիները Հայոց լե-
 գուի, գրականութեան եւ պատմութեան մասին
 (1840—1865 թթ.): Հայկազարնի մե պատմիչով եւ
 կենսագրութեան նիւթերով: (Իմաստագործ Քա-
 յալաթեանցի): Մոսկուա, Վարձատէր Գաղտնու,
 1898. 80, Հ-273 էջ: Գին՝ ըր. 1.50: